ՆՈՐ-ԴԱՐ

№ 169 ԵՐՈՐԴ ՏԱՐԻ Զորեքշաբթի 8 Հոկտեմբերի **1886** Զորեքշաբթի 8 Հոկտեմբերի ԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 169

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Հասում է 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բառին 2 կ., տեղացիների համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Քրոնիկոն.—Լուրեր։
Քաղաքական. — Բօլղարական գործեր. Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրները։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանասիրական.—Ուրիշի հարստութիւնը օգուտ չի բերիլ։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Այս համարի առաջնորդողը լոյս կը տեսնի վաղուան համարում։

—

Երկուշաբթի, հոկտեմբերի 6-ին, քաղաքային թատրոնում հայոց ներկայացումն էր։ Խաղացին «Քինն» դրաման և Չմշկեանի «Նկարիչները»։ «Քինը» արդէն յայտնի է քաղաքիս թատրոնական հասարակութեան—մի պիէսա, որ սրտին ու մտքին իսկապէս կերակուր չտալով՝ գրուած է մի տաղանդաւոր դերասանի համար։ Ադամեանն էլ ցոյց տուեց իւր տաղանդը, մանաւանդ չորրորդ գործողութեան այն տեսարանում, ուր նա պատրաստվում է բեմ դուրս գալու։

Ամբողջ ներկայացման ժամանակ բեմի վերայ մի սառնութիւն էր տիրում, այն սառնութիւնը՝ որ յատուկ է իւրաքանչիւր բեմին, երբ թատրոնը դատարկ է լինում։ Յաւով պէտք է ասենք, որ այդ երեկոյեան թատրոնը մեծ մասամբ դատարկ էր և Ադամեանը իրրև դէմն քնից զարթնելով բնական էր, որ յօրանջէր։

Հասարակութեան անտարբերութիւնը դէպի հայոց բեմը և նրա վերայ յայտնուող տաղանդները վատ տպաւորութիւն է անում, մանաւանդ երբ տեսնում ես, որ հայոց թատրոնի գործը ձեռնարկողները աչխատանք են ցոյց տալիս և իրենց ձեռքով եկածն անում են գործը կարգին առաջ տանելու։

—

ՇՈՒՇԻԻՅ. — Հոգևոր դպրանոցին քաղաքիս հասարակութիւնից վաղուց ընծայուած ամբարի արևմտեան կողմի գեհինը, որ նոյնպէս ամբարին է պատկանում, այժմ, ինչպէս ասում են, կցուած է մի հարուստ վաճառականի տան պարտիզի հետ։ Այս մասին մի բացատրութիւն ստանալը անհրաժեշտ է։

—

ԱՐԹԻԿԻՑ. (Ալէքսանդ.)— Արթիկը հողի կողմից գտնուած բոլոր գիւղերի մէջ ամենաղքուածն է, այնպէս որ մի մարդուն հասնում $^1/_3$ օրավար, չորս կոտ ցանքի տեղ. իսկ խոտատեղ բնաւ չկայ և արօտատեղ չատ քիչ, դրա համար եղած ցանքերի գրեթէ կէսը տալարն է արածում։ Ամբողջ սահմանի $^1/_6$ է միայն ջրովի, իսկ մնացածը անջրդի դաշտային և լեռնային է։ Եթէ երաշտ է լինում, դաշտային մասը չի բուսնում, իսկ եթէ անձրևային է լինում, հունձը յետանում է և լեռնային մասի ցանքը ցրտատար է լինում և բանի պէտք չէ գալիս։

Հողի սակաւութիւնից առաջացած անընդհատ վէճերի և կռիւների պատճառով Արթիկում միշտ թագաւորում է երկու միմեանց հակառակ կուսակցութիւն, որոնք մեծամեծ վնասներ են հասցնում միմեանց։

—

Պետական կալուածների մինիստրը աչքի առաջ ունենալով, որ չատ անգամ ուրիշները կովկասի պետական արօտատեղերն ու հողերը սեփականացնում են իրենց, բոլոր այդ տեսակ հողերը իւյատ բերելուց յետոյ, կարգադրել է, որ պլաններ կազմեն և այդ հողերը հատատարապէս բաժանեն հասարակութիւնների վերայ և միևնոյն ժամանակ էլ հարկը նշանակեն հողերի քանակի և որակի համեմատ։ Հողերի քանակի և որակի համապատասխան հարկ դնելը այս տարի գործադրուեցաւ Ղարսի նահանգում և լաւ արդիւնք ունեցաւ։ Միևնոյն ժամանակ էլ Թիֆլիսի և Ելիսաւետապօլի նահանգներում պետական հողերի վերայ բնակութիւն հաստատող գերմանական գաղթականներին էլ նոր կազմութիւն պէտք է տալ։ Գաղթականների ձեռքում, ինչպէս հաղորդում է «Պետեր. Վեդ.»-ին, գտնվում է մօտ 30,000 դեսեատին վարելու յարմար հող։

—

Պետերբուրգի եկեղեցիներից մինում մի հասարակ գիւղացի գտնում է 36,000 ր. և օրէնքով գտնողին որոշուած գտած փողի $^1/_3$ մասը ստանալու համար տանում է քաղաքապետի կանցելեարիան։ Բայց փողի տէրը մինչև օրս, ինչպէս լրագիրները գրում են, չէ երևում, իսկ 6 ամսից գիւղացին տէր կը դառնայ 36,000 րուբլուն։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Այս օրերս ատցուեցաւ պ. Մուխաֆեանների տեղւոյս ս. փրկիչ եկեղեցուն ընծայած բրոնզեայ և բիւրեղաձև ապակիներով զարդարուած դևզեցիկ Ջահը, որ և կը կախուի մօտ օրերումս ս. Փրկիչ եկեղեցում։ Ցանկալի էր, որ նրանց օրինակին հետևողներ չատ լինէին։

—

ՆՈՑՆ ՏԵՂԻՑ.—Որքան ցաւալի և արհամարհական էր մեզ կարդալ «Բարոյական կրթութիւնից զուրկ աղջիկ» խորագրով մամուլի մէջ առաջնորդողը, նոյնքան միխիթարական էր մեզ կարդալ պատուական «Նոր-Դար»-ի մէջ տպած «Ազատ խորհրդածութիւններ» խորագրով առաջնորդողները։ Լրագրի յօդուածները և բանասիրականները գնահատող—հասկացողները՝ սիրով կարդում են «Խարեգործներ» վէպը։ Ցնորակալութիւն յայտնելով խմբագրութեան ամբողջ թիմի հետ ևս ողջունում եմ նրա հետ միասին։ Միևնոյն ժամանակ էլ Թիֆլիսի և Ելիսաւետապօլի նահանգներում պետական հողերի վերայ բնակութիւն հաստատող գերմանական գաղթականներին էլ նոր կազմութիւն պէտք է տալ։ Գաղթականների ձեռքում, ինչպէս հաղորդում է «Պետեր. Վեդ.»-ին, գտնվում է մօտ 30,000 դեսեատին վարելու յարմար հող։

—

Պետերբուրգի եկեղեցիներից մինում մի հասարակ գիւղացի գտնում է 36,000 ր. և օրէնքով գտնողին որոշուած գտած փողի $^1/_3$ մասը ստանալու համար տանում է քաղաքապետի կանցելեարիան։ Բայց փողի տէրը մինչև օրս, ինչպէս լրագիրները գրում են, չէ երևում, իսկ 6 ամսից գիւղացին տէր կը դառնայ 36,000 րուբլուն։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Այս օրերս ատցուեցաւ պ. Մուխաֆեանների տեղւոյս ս. փրկիչ եկեղեցուն ընծայած բրոնզեայ և բիւրեղաձև ապակիներով զարդարուած դևզեցիկ Ջահը, որ և կը կախուի մօտ օրերումս ս. Փրկիչ եկեղեցում։ Ցանկալի էր, որ նրանց օրինակին հետևողներ չատ լինէին։

—

ՆՈՑՆ ՏԵՂԻՑ.—Որքան ցաւալի և արհամարհական էր մեզ կարդալ «Բարոյական կրթութիւնից զուրկ աղջիկ» խորագրով մամուլի մէջ առաջնորդողը, նոյնքան միխիթարական էր մեզ կարդալ պատուական «Նոր-Դար»-ի մէջ տպած «Ազատ խորհրդածութիւններ» խորագրով առաջնորդողները։ Լրագրի յօդուածները և բանասիրականները գնահատող—հասկացողները՝ սիրով կարդում են «Խարեգործներ» վէպը։ Ցնորակալութիւն յայտնելով խմբագրութեան ամբողջ թիմի հետ ևս ողջունում եմ նրա հետ միասին։ Միևնոյն ժամանակ էլ Թիֆլիսի և Ելիսաւետապօլի նահանգներում պետական հողերի վերայ բնակութիւն հաստատող գերմանական գաղթականներին էլ նոր կազմութիւն պէտք է տալ։ Գաղթականների ձեռքում, ինչպէս հաղորդում է «Պետեր. Վեդ.»-ին, գտնվում է մօտ 30,000 դեսեատին վարելու յարմար հող։

—

Պետերբուրգի եկեղեցիներից մինում մի հասարակ գիւղացի գտնում է 36,000 ր. և օրէնքով գտնողին որոշուած գտած փողի $^1/_3$ մասը ստանալու համար տանում է քաղաքապետի կանցելեարիան։ Բայց փողի տէրը մինչև օրս, ինչպէս լրագիրները գրում են, չէ երևում, իսկ 6 ամսից գիւղացին տէր կը դառնայ 36,000 րուբլուն։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Այս օրերս ատցուեցաւ պ. Մուխաֆեանների տեղւոյս ս. փրկիչ եկեղեցուն ընծայած բրոնզեայ և բիւրեղաձև ապակիներով զարդարուած դևզեցիկ Ջահը, որ և կը կախուի մօտ օրերումս ս. Փրկիչ եկեղեցում։ Ցանկալի էր, որ նրանց օրինակին հետևողներ չատ լինէին։

—

ՆՈՑՆ ՏԵՂԻՑ.—Որքան ցաւալի և արհամարհական էր մեզ կարդալ «Բարոյական կրթութիւնից զուրկ աղջիկ» խորագրով մամուլի մէջ առաջնորդողը, նոյնքան միխիթարական էր մեզ կարդալ պատուական «Նոր-Դար»-ի մէջ տպած «Ազատ խորհրդածութիւններ» խորագրով առաջնորդողները։ Լրագրի յօդուածները և բանասիրականները գնահատող—հասկացողները՝ սիրով կարդում են «Խարեգործներ» վէպը։ Ցնորակալութիւն յայտնելով խմբագրութեան ամբողջ թիմի հետ ևս ողջունում եմ նրա հետ միասին։ Միևնոյն ժամանակ էլ

կան ժողով) տրուի՝ իրենց ձեռքում եղած խճուղիները ուղղելու և նորերը չինելու համար։

—

ԱԽԱԼՑԽԱՑԻՑ.—Ահա երկու չաբաթ է, ինչ Ախալցխա 6 հոգի պօլտեցիներից բաղկացած երաժշտական մի խումբ է եկել, որ ղայֆաներում և հարսանիքներում—մեծ մասամբ ասիական քաղցր և ժողովրդին մատչելի երգեր նուագելով՝ զբաղեցնում է ժողովրդին։ Նուագածուների խումբը մտադիր է Ախալցխա ձմեռելու։

—

Լրագիրներում կարդում ենք, որ չվեղացի գիտնական Վ. Չօմիկլը մի նոր և չափազանց հետաքրքիր գիտ է արել։ Նա միջոց է գտել հեռագրական թելի միջոցով լուսանկար պատկերները մի կայարանից հանել միւս կայարանում—որտեղ կարելի է այդ մի պատկերից լուսանկարչութեան կանոններով որքան հարկաւոր լինի օրինակներ հանել։

—

Մօտ օրերս Մօսկվայ վերադարձան Մօսկվայի հնագիտական ժողովի կողմից Արևմտեան կովկասը ուսումնասիրելու համար ուղարկուած անձինք։ Այդ արշաւանքին մասնակցողներից Վ. Միլլերը ժան է եկել օսերի, կաբարտինների և չէչէնների երկիրները։ Նա հետազօտել է մի քանի հին գերեզմաններ և գտել է զանազան բրոնզէ իրեղէններ, երկաթեայ առարկաներ—ինչպէս օրինակ նետեր, տեգեր և այլն, որոնք հանգուցեալների հետ են թաղուած եղել։—Բացի այդ, Միլլերը հաւաքել է մի քանի տեղեկութիւններ սկզբնական քրիստոնէա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՐԻՇԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ ՕԳՈՒՏ ՉԻ ԲԵՐԻԼ *)

(Վերջ)

II

Կալանաւոր Բաղալէյկի մահից անցել էր մի և կէս տարի։ Հանքային ջրերում լողանալու համար բաղմաթիւ հիւրեր հաւաքուել էին Դրուսկենիկում.—որը եկել էր այստեղ առողջանալու, որը՝ զուարճանալու. իսկ հարստացու աղջկերք ունեցող մայրերը՝ հարուստ փեսացուներին հրապուրելու քաղցր ակնկալութեամբ։

Մի տաք գիշեր՝ զբօսարանի մի քանի ճոխ հագնուած տիկիններ նրա տարանների վերայ նստած, զբաղուած էին թեթև զրպարտութիւններով և ամեն տեսակ քաղցր զրոյցներով։

—Դուք այսօր տեսել էք կախարդիչ կոմսուհի Լատերին—հարցրեց մեզ ձայնով տիկին Տումանսկայան դառնալով իւր գեղեցիկ ընկերուհին։

—Կոմսուհի Լատեր, հարցրեց տիկին Մազուրկեվիչը—ո՛չ, ես չեմ ունեցել այդ բաղդը. այդ կոմսուհին երևի չատ հազիւ է երևում մեր ընկերութեան մէջ և պատիւ է ունենում ամբողջ օրը իւր ազգականի կամ բարերարի հետ ձիով զբօսնելու...

Վերջին խօսքերը դիտմամբ բարձր ձայնով արտասանեց նա, որպէս զի լսէը նրանից մի փոքր հեռու նստած գեղեցիկ երիտասարդը։

—Ի՞նչպէս քարասիրտ էք դուք, տիկին Մազուրկեվիչ,—նկատեց բարձրահասակ, մի նիհար իշխանուհի, որ հագած էր սպիտակ կիսէլ հագուստ։

—Ինչի՞ համար եմ չարասիրտ, տիկին Սարուսկի, նրա համար, որ ես յիշեցի կոմսուհի Լատերի բարերարի անունը, բայց ասացէք ինքներդ, իմանում էք արդեօք, ով է այն պատուական ծերունին, որ անբաժան ուղեկցում է կոմսուհուն։

—Դիցուք թէ ես չեմ իմանում... բայց միևնոյն ժամանակը թոյլ չեմ տալ ինձ կարծելու, որ նա... ծ, ո՛չ երբէք։

Բարեկամուհիների այս խօսակցութիւնը բաւականին երկար չարունակուեց և վերջապէս այն աստիճան նեղացրեց երիտասարդին, որ նա վերկացաւ տեղիցը և ծանր քայլերով դիմեց դէպի զբօսարանի կից չրջապատը։

—Ահա դուք ձեր խօսակցութեամբ փախցրիք մեր երիտասարդ բժիշկ Նեզլօբինին,—ասաց նիհար իշխանուհին բարկութեամբ իւր աչքերը առողջակազմ ընկերուհու վերայ ձգելով։

—Երևի մեր խօսակցութիւնը չատ չէր դուր գալիս ձեզ—պատասխանեց նա,—բայց միամիտ եղէք, ձեր Մանիչկան երբէք չէ կարող նրա ուշադրութիւնը գրաւել։

Նիհար իշխանուհին զայրացաւ դէմքի վարդագոյն փոչու խաւերի տակ և հովհարով զարկելով նստարանին՝ պատրաստ էր արդէն հարուածելու

Թունալից խօսքերի հեղեղատով, երբ յանկարծ ճեմելիքներից մինի ծայրում լսուեց ձիերի դոփիւնը և իսկոյն երեւաց զբօսնող տիկինը։

Բոլոր բարեկամուհիները լռելեայն իրենց հայեացքը ձգեցին մօտեցող զոյգի վերայ։

Տիկինը իւր ասպետի հետ մօտեցան հիւրանոցին, որ այնտեղ, զբօսարանի մօտն էր գտնվում. լքան նժոյգներից, յանձնեցին նրանց սպասող ձիապանին և մտան ներսը։

—Ահա ձեզ և կոմսուհին իւր ազգականի հետ,—չարամտութեամբ խօսեց մի հաստափոր տիկին,—բայց ահա և բժիշկը,—յարեց նա, հովհարով ցոյց տալով ուղիղ դէպի չրջապատը, ուր նստարաններից մէկի վերայ նստած էր Նեզլօբինը, որ իսրին մտածմունքի մէջ ընկղմուած՝ ձեռնափայտով նչաններ էր գծում աւազուտի վերայ,—եթէ նա չէ ուզում ուշադրութիւն դարձնել մեր աղջկանց վերայ, կոմսուհին էլ նոյնպէս իւր հերթում չէ ուզում նրան ճանաչել։

—Դէհ, այդ դեռ չէ նչանակում, որ նա ուշադրութիւն չէ դարձնում մեր աղջկանց վերայ, եթէ նա չէ ծանօթանում ձեր Մանիչկայի հետ,—մէջ ընկաւ տիկին Տումանսկայան,—բայց և այնպէս, երեկ ամբողջ մի կէս ժամ խօսակցում էր իմ Ալէքսանդրինայի հետ՝ սիրալիր յարգութիւն ցոյց տալով նրան։

—Երեակայում եմ, թէ ինչ սիրալիր յարգութիւն եղած կը լինի։

—Այո՛, յարգանք ևս... ինձանից է կախուած այդ բացատրել։

—Լսեցէք, լսեցէք տիկիններ, տիկին Տումանսկայան պատրաստվում է չուտով հարսանիք վայելելու, բայց և այնպէս ես չեմ կարծում, որ այդ բժիշկը այնքան ցանկալի փեսացուն լինէր, նախ՝ որ նա իսկապէս հարուստ չէ...

—Չարմուստ չէ, նա... Ուրեմն դուք չէք իմանում, տիկին, ես նրա մասին ամենաստոյգ տեղեկութիւններ ունիմ, նա չատ հարուստ է. հէնց երէկ ասացին ինձ, որ նա այցելել է իշխան Լեզոխովի կալուածքը և մտադիր է այն գնելու...

—Ի՞նչ Լեզոխովի կալուածք... այդ կալուածքի համար 300 հազար են պահանջում։

—Այո՛, բոլորովին ճշմարիտ է ձեր ասածը, բայց դրանով դատեցէք և նրա կարողութեան մասին...

—Անկարելի բան է։

—Աստուած լուր է, նա մի հասարակ բժիշկ է։

—Չա՛, հա՛, հա՛։

—Չեմ հաւատում։

Խօսակցութիւնն սկսեց ամէլի տաքանալ. սակայն կոմսուհի Լատերի հիւրանոցի դրան կրկին երևալը միանգամայն փակեց հետաքրքրուող մայրերի բերանները, նրանք լռեցին և սկսեցին նայել։

Կոմսուհի Լատերը բարձրահասակ, գեղեցկակազմ և թխահեր մի օրիորդ էր, բաւն տարին անց և չատ գեղեցիկ, մանաւանդ նրա մեծ մեծ, սևորակ աչքերը։ Նա հագնուած էր չատ

հասարակ և իրեն հեռու էր պահում հասարակութիւնից. նա ժամանակը անց էր կացնում գրեթէ միայն մի ծերի հետ, առանց մի րոպէ նրանից հեռանալու, և դրա համար էր, որ տեղիք էր տալիս զանազան բարբանքների. բայց ահա թէ ինչի նա բացառութիւն էր անում միայն բժիշկ Նեզլօբինի վերաբերմամբ. նուագահանդիսի ժամանակ երիտասարդ կոմսուհին դիպմամբ ծանօթանում է նրա հետ և յետոյ կրկոքեան յաճախ զբօսնում են չրջապատում. Ծանօթութեան քայլից՝ սիրոյ կայծ—մի մազաչափ է միայն. Նեզլօբինը սիրահարվում է. կոմսուհին ես անտարբեր չէ լինում դէպի երիտասարդ բժիշկը. Նեզլօբինն օրէց օր յափշտակվում է նրա սիրով, վառվում է, երբ նրա ականջին է հասնում տիկինների բարբանքների ձայնը և վճռում է պարզել ամեն բան։

Կոմսուհի Լատերն անցնելով հիւրանոցից՝ ուղղակի մտաւ չրջապատը, ուր և մտածեաւ Նեզլօբինին։

Խօսակցութիւնը չուտով սկսուեցաւ երկու սիրահարների մէջ և Նեզլօբինը հարցրեց կոմսուհուն նրա ամենօրեայ ուղեկցի մասին, թոյլ տալով արտասանելու մինչև անգամ երկմտի խօսքեր ծերունու վերաբերմամբ։

—Ես կը վիրաւորուէի և կը նեղանայի ձեզանից,—պատասխանեց կոմսուհին,—բայց նեղուում եմ, որովհետև ես զգում եմ՝ թէ ինչի՞ ձեզ դուբ չէ գալիս իմ ասածը, բայց միամիտ եղէք, նա ձեզ խոչընդոտ չի լինիլ...

3 տրված է յոթ և մեկ քառորդ ամսվա ընթացքում ամենաբարձր գինը, որ վճարվել է մեկ ֆունտ ստեռլինգի համար, ինչպես նաև ամենացածր գինը, որ վճարվել է մեկ ֆունտ ստեռլինգի համար։

Ինչպես տեսնում ենք, ոսկու գինը ամենաբարձր կետին է հասել 1887 թվականի հունվարի 3-ին, երբ մեկ ֆունտ ստեռլինգի համար վճարվել է 3 ռուբլի 10 դոլար 50 կոպեկ։ Ամենացածր գինը, որ վճարվել է մեկ ֆունտ ստեռլինգի համար, եղել է 1885 թվականի դեկտեմբերի 21-ին և կազմել է 3 ռուբլի 7 դոլար 50 կոպեկ։

Ինչպես տեսնում ենք, ոսկու գինը ամենաբարձր կետին է հասել 1887 թվականի հունվարի 3-ին, որ ժամանակ ոսկու գինը ամենացածր կետին է հասել 1885 թվականի դեկտեմբերի 21-ին

րել են մի քանի հոգի։ Խռովութիւն բարձրացնողներից 41 հոգի ձեռբակալուած են։

—Կ. Պօլսից «Journal des Débats»-ին գրում են, որ Սուլթանը փառաւոր ընդունելութիւն է արել ֆրանսիական ծովակալ Մարկեսականին. ընդունելութեան ամէն տեսակ մանր բաներն անգամ Սուլթանը ինքն էր կարգադրում. ճաշի համար զօրածառում էին համարեա ամբողջապէս ոսկեայ ամաններ։ Ճաշի հրաւիրուած բոլոր ֆրանսիացիները չքանչաններ ստացան։ Մի խօսքով այնպէս էր ամէն բան կարգադրուել, որ Էդինբուրգեան հերցոգի և ծովակալ Մարկեսակի ընդունելութիւնների մէջ զանազանութիւնը նկատելի լինի։

—Վիեննայում խօսակցութեան գլխաւոր նիւթն է այժմ ոչնչականների կազմած մի մտադրութիւնը, որով երկրաչարժի նման մի բան առաջացնելով, ամբողջ քաղաքը պիտի կործանուէր։ Ոչնչականների այդ դաւադրութիւնը բարեբաղդաբար յայտնւում է և բոլոր գործին մանակցողները կալանաւորւում են։ Այդ անարխիստները (ոչնչական) բոլորն էլ արհեստաւորներից են, իսկ պարագլուխները, ինչպէս հաւատացում են «Նօվօստի»-ին, հնչակեան ոչնչական Մօսոլ հետևողներ են։

—Ընդարձակ սերբերի մէջ, Մետրովիչ քաղաքից ոչ հեռու գտել են մի ընդարձակ, Սերբիայի թագաւոր Միլանի դէմ կազմուած դաւադրութիւն. դաւադրութեան նպատակը—Միլանի գահընկեցութիւն է լինում։

—

—Սօֆիայից ստացուած լուրերին համեմատ պատերազմական մինիստր պօլկովնիկ Նիկոլայեվը հրամանագրել է զինուորական վարչութիւններին, որով 7 կապիտան, 8 չտաբս-կապիտան և 8 պօրուչիկներ ենթարկուած են մի ամսուայ քանտարկութեան՝ իշխան Ալէքսանդրի գահընկեցութեան մասնակից լինելուն համար։ Միևնոյն հրամանագրով Սօֆիայի զինուորական ուսումնարանների 41 հոգի ևս նոյնկերներ միևնոյն յանցանքի մէջ գտնուած լինելու համար, ատեաններից զերկուսած և հատարակ զինուորի հատասարուելով ցրուած են զանազան զինդերի մէջ։ Իսկ չատ սպաների էլ, որոնք նոյնպէս խառն են եղել անցեալ ամիսուայ դէպքերում, առաջարկուած է, որ հրաժարական տան։

—Բրիտանական կառավարութիւնը, ինչպէս հաղորդում են լրագիրները, ամենայն կերպով պատրաստ է Բոլղարիային օգնելու. նրա անելիք փոխառութիւնը գլուխ բերելու համար։

—

Այն՝ ինչ որ աւելի աչքի է ընկնում Սօֆիայում, գրում է «Matin»-ի թղթակիցը Սօֆիայից, դա տեղացիների բարք ու վարքի պարզութիւնն է։ Խըհամակալները և մինիստրները մտչելի են ամենքին և օրուայ ամեն ժամանակին։ Մինչև անգամ կարելի է տեսնել, թէ ինչպէս դրանք փողոցով անցնելիս, ծանօթները առանց այլ և այլութեան մօտենում են նրանց և սկսում են բարձրաձայն խօսել ամենայն համարձակութեամբ. այդտեղ կամաց-կամաց հաւաքւում է ամբոխը և չրջապատում է խօսողներին—ցանկանալով մի նոր բան իմանալ։

Միակ հաստատութիւնը, որին ճարպանի (բեատօրան) անուն կարելի է տալ, դա Պանկովի արձանոյն է, ուր հաւաքւում են թէ կառավարիչները և թէ ժողովուրդ և խօսում են գործերի դրութեան մասին։ Այդտեղ կարելի է տեսնել և բոլղարական քաղաքներ, որոնց չորերի ձեր ամենագէղեցիկներից կարելի է համարել Եւրոպայի մէջ։ Օրուայ բոլոր ժամանակներին էլ կարելի է միչա 150 հոգի մարդ գտնել Պանկովի արձանատակ։ Նրանք ճանաչում են միմեանց, և քաղաքում առաջնորդող դեր են խաղում։ Այդտեղ է արծարծվում մի որ և իցէ միտք, մի որ և իցէ խնդիր։ Տեսար մէկ էլ Աւստրիան վեր է կացել պատերազմելու, կամ Բիսմարկը վախճանուել է... մի խօսքով այնպիսի հարցեր, այնպիսի լուրեր է տարածվում, որ չատ անգամ անհաւատալի է թւում։

«Մօսկովսկի վեդոմօստ»-ի թղթակիցը հետևեալ առաջարկութիւնն է անում Ռուսիայի դիրքը Բոլղարիայում, հետևապէս և Արևելքում հաստատ պահելու համար։ «Փոխանակ բոլղարական ոչնչացրած դաշի վերայ նոր իշխան բազմեցնելու, աւելի է յիշեալ թղթակիցը, աւելի լաւ և աւելի գործնական չէը լինել, եթէ թագաւոր կայսրը լիովին իր հովանաւորութեան տակ առնէր Բոլղարիան և իր փոխանորդ-իշխանը ունենար այնտեղ։ Թղթակիցը աւելացնում է իբր թէ լուսաւորուած բոլղարները անկեղծօրէն ցանկանում են այդ բանին։ Հաւատացէք, չարունակում է թղթակիցը, որ չատ հեշտութեամբ հնարաւոր է բոլղարական սահմանադրութիւնը ոչնչացնելով, նրա տեղը բոլղարների կեանքին համապատասխան օրէնքներ դնել։ Այդ թղթակիցը ոչինչ չէ ասում, թէ մեծ պետութիւնները կը համաձայնեն մր այդպիսի ծրագրի իրագործման։

—

—Բոլղարական կառավարութեան յայտնուած է, ասում է Բէյտերի դործակալութիւնը, լօրդ Իդդէսլէյի պետութիւններին ուղարկած նամուգրի քաղաքական կողմերը։ Այդ նամուգրի մէջ լօրդ Իդդեսլէյը (Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր) պետութիւնների ուշադրութիւնը դարձնում է «Բոլղարիայի վերանչաւոր դրութեան, և բոլղարական իշխանութեանը բարոյական աջակցութիւն անելու անհրաժեշտութեան վերայ»։

—

«Standard»-ը երկար խօսելով լօրդ Չերչիլի ճանապարհորդութեան մասին և ցոյց տալով, որ Բիսմարկի նման դիպլօմատից կարելի չէ ուղիղ պատասխան ստանալ այս ինչ կամ այն ինչ քաղաքական դրութեան վերաբերմամբ, ի վերջոյ եզրակացնում է. «Այսպէս ուրեմն, լօրդ Չերչիլի ճանապարհորդութիւնը պէտք է համարել մի կազդուրիչ զբօսանք. այդ միևնոյնն է, թէ նա կը տեսակցի իշխան Բիսմարկի հետ՝ թէ ոչ»։

—

ԲԻՐՄԱՆԻԱ.—Բանգունից «Բէյտ. գործ.»-ը հեռագրում են թէ Մենդալէյի չրջանի բնակիչներին չափազանց նեղութիւն է պատճառում զինուորական պիտոյքները ձրի կրելու պարտաւորութիւնը, ուստի այդ պատճառով էլ, ժողովուրդը փոքր առ փոքր անցնում է ապստամբների կողմը։ Համարեա ամբողջ վերոյիշեալ երկիրը գտնւում է ապստամբների պարագլուխ Բօջա-Եազայի ձեռը, որը մի քանի տեղերից վռնտելով ոստիկանութիւնը տիրել է զէնքերին և պատրաստ է նոյնիսկ Բօջա-Եազան օրը ցերեկով յարձակվում է Մենդեանի մօտ գտնուող մի գիւղի վերայ և յետոյ պաշարում է և Մայհոկ չէնը։

—«Times»-ին հաղորդում են, որ Շանի ազերութիւնները մեծ վրդովմունքի մէջ են և նոյեմբերին զօրքեր պիտի ուղարկուին այնտեղ։

—Մանդալայից ստացուած տեղեկութիւններին համեմատ, ջուր կոտրելու պատճառով առողջապահական կէտից չափազանց վատացել է քաղաքը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հռչակաւոր կարդինալ Մաննիսի հետաքննութիւններից երևում է, որ արբեցողութիւնը քանի գնում աւելանում է։ Մաննիսի հաւաքած ստատիստիկական տեղեկութիւններին համեմատ, Անգլիայում արբեցութիւնից իւրաքանչիւր տարի մեռնում են 100,000 հոգի, այդ թուին համապատասխան աւելանում է և յանցաւորների և ուղեղի անբժշկելի հիւանդութիւն ունեցողների թիւը։ 1829-ին Լօնդոնում կային 30,000 խմիչքավաճառներ և ճաշարաններ, մինչդեռ այժմ 200,000-ից աւելի են համարում նրանց թիւը, չնայելով որ բնակիչների թիւը 1830-ից մինչև այժմ միայն մի անգամ է աւելացած։

***

Անգլիայի բարձր ուսումն ստացած կանայք վճռել են կանանց բարձրագոյն ուսումն ստանալու մասին համար կռուողներից մինի պրօֆեսօր Ֆաուսէտին արձան կանգնեցնել։ արձանը պիտի ունենայ չրմռզի ձև և Լօնդոնի հասարակական պարտէզներից մինում պիտի կանգնեցնեն։ Արձանը կարժենայ 600 ֆ. ստերլինդ, իսկ կերտողը կլինի միսս Գրանդոը։

***

Չորս միլլիօն մարկի ժառանգը։ Մօտերս Բերլինում վախճանում է մի ծեր որսորդ, որի ահագին հարստութեան վերայ մեծ աչք էին դրել նրա ազգականները, որովհետև նրանք գիտէին, որ հանգուցեալը իր սիրելի որգեդրին 20,000 մարկ է միայն կտակել։ Բայց որքան մեծ եղաւ ամեն կողմից, ժառանգութիւն ստանալու յուսով թագնուող ազգականների ապշութիւնը, երբ իմացան, որ հանգուցեալը մի ուրիշ կտակով էլ ամբողջ 4,000,000 մարկ (մարկը=մօտ 40 կոպ.) հարստութիւնը կտակել է իր որդեդրին, իսկ ազգականներին ի յիշատակ թողնում է միայն մի քանի ոսկէ և արծաթէ իրեր։

***

Ոսկէ հանքեր Աւստրալիայում։ Անգլիական կառավարութիւնը բաւականին հետաքրքիր տեղեկութիւններ ստացաւ ոսկէ հանքերի մասին, որոնց գտել են արևմտեան Աւստրալիայում, Կիմբերլէյի և Դերբիի չրջակայքներում։ Երևեցաւ, որ այդ հանքերը բաւականին ընդարձակ տարածութիւն են բռնում։ Արդէն հաւաքած է 2,000 ունցիա ոսկի։ Ոսկի որսողներից ամեն մինը օրական ձեռք է բերում երկու և աւելի ունցիա ոսկի։ Թէև հանքերի տեղը հեռու է քաղաքներից, ճանապարհները վատ են և անյարմար, ոսկին տանելու ծախսը չատ թանկ է նստում և տեղական բնակիչները բոլորն էլ վայրենի են, այնու ամենայնիւ հազարաւոր կալուածատէրեր և աւստրիալական գաղթականներ թափվում են այնտեղ ոսկի ձեռք բերելու և այդ ոսկիի տեղը յիշեցնում է Կալիֆորնիայի ժամանակները։ Արդէն այդ արկածախնդիրներից հաւաքուել են մօտ 4,000 հոգի, որոնց թվում գտնւում են և չատ ունեորներ։ Նրանք ձեռաց երկաթուղիներ են չինում, հնչատացնում են ճանապարհի հաղորդակցութիւնները ափի հետ և իրաւունք են խնդրում աւստրալիական կառավարութիւնից իրաւունք տալ հեռագրական գիծ չինելու։ Այդ արկածախնդիրների բնակիչների մէջ մի քանի անգամ ընդհարումներ եղան։ Բնիկները, ինչպէս և զուլուսները զինուած են նիզակներով։

***

Ֆրանսիական լրագիրները պատմում են հետևեալ դէպքի մասին, որ տեղի ունեցաւ Ֆրանսիական զօրախմբի վերջին զօրախաղութեան ժամանակ և որ խոր և սրտառուչ տպաւորութիւն թողեց ներկայ եղողների վերայ։ Վաղուց արդէն, Ղրիմի պատերազմի ժամանակ 4-րդ հուսարական գնդի 22 տարեկան կրտսեր-սպայ, Բ...ն ընկաւ պատերազմի դաշտում, ստանալով ծանր վէրքեր այն ժամանակ, երբ թշնամու հեծելազօր գունդը չրջապատեց նրա գնդին։ Վէրքերը կապելիս բժիշկները տեսան նրա ժարմնի վերայ 17 վէրք և յայտնեցին, թէ ապրելը կը մեռնի։ Սակայն ջահելութիւնը յաղթող հանդիսացաւ։ Բ...ն կարճ ժամանակ վարպետի հիւանդանոցում մնալուց յետոյ և ստանալով «պատուաւոր լեգիօնի» չքանչանը, տեղափոխուեցաւ Ֆրանսիա և հետզհետէ կազդուրելով իր առողջութիւնը, չարունակեց ծառայութիւնը նոյն գնդում։ Այժմ Բ...ն գնդապետ է և հեծելազօր գնդի հրամանատար։ Երբ 12-րդ արմէական զօրաբաժնի զօրախաղութեան ժամանակ, նրա գունդը փառաւորապէս կատարեց իր վերայ դրած ծանր պարտականութիւնը, զօրախաղին ներկայ գտնուող ռուսական գեներալը, իմանալով Բ...ի քաջագործութիւնների մասին Ղրիմի պատերազմի ժամանակ, մօտեցաւ նրան, համբուրեց ու ներկայացրեց ռուսական դեսպանութեան սպաներին։

***

Նիւ-Եօրկի գաւառական բարձրագոյն դատարանի Օլբենիում ունեցած նիստում, փաստաբանական աթոռի վերայ առաջինն էր, որ կին-փաստաբան դուրս եկաւ։ Այդ կինը—միսս Կէտ Սոռնմանն է։ Նա մօտ երեսուն և հինդ տարեկան մի կին է, հիմնաւորապէս ուսումնասիրել է իրաւաբանական գիտութիւնները և իր եռանդի չնորհիւ, Նիւ-Եօրկի օրէնսդրական ժողովը թոյլ տուաւ կանանց էլ փաստաբանելու դատարանների մէջ։

***

Մօտերս Ռուսիայում էլ յայտնուել է մի նոր ցաններ, որ ահա, ճչմարիտ է թէև ակամայ, 50 օր է ծոմ է պահում։ Այդ անձը կերակրափողի հիւանդութիւն ունենալով, ոչ մի բան չէ կարողանում կուլ տալ։ Հիւանդութեան առաջին տասը օրերը, ամբողջ մի ժամ չարչարուելով, դեռ ևս կարողանում էր ինչ և իցէ մի քաոորդ բաժակ ջուր կուլ տալ, բայց այնուհետև կերակրափողը քանի գնում, այնքան է նեղանում, որ անհնար է լինում կէս գդալ ջուրը կուլ տալ։ Վերոնիկն, ինչպէս պատմում է «Նօվօստի»-ն, ման է եկել Պետերբուրգի հիւանդանոցները, բայց ոչ մի տեղ չեն ընդունել։

Այդ ծերունին 87 տարեկան առոյգ մարդ էր։ Նա ման էր գալիս փողոցներում և երկար խօսակցում էր իր բարեկամների հետ. բայց վերջի հիւանդութիւնը նրան զրկեց ոյժից, և նա այժմ պառկած սարսափով դիտում է, թէ ինչպէս ատրճան առատիճան մարում է իր կեանքը։

***

Մելինիտ։ Ներկայ տարուս ընկզմներում մեծ աղմուկ բարձրացրեց Գերմանիայում կրուպպի փորձերը—նոր հնարած վառօդի - հելգոֆիտի վերայ։ Այդ վառօդով լցրած գործիքները, ինչպէս ասում էին, սարսափելի աւերիչ ներգործութիւն էին անում։ Այժմ ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ իրենք էլ նոր, ինչպէս փորձերը ցոյց են տալիս, կործանող նիւթ են գտել։ Երկու վառօդների բաղադրութիւնը այժմ դեռ գաղտնիք է մնում։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

6 Հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Նաքարի արդիւնաբերութեան չափը հաւասարակշռելու հարցը գլուխ չեկաւ. մինիստրների կոմիտէոը կրկին պիտի վերաքննէ այդ խնդիրը։

ԲՈՒԵՇՈՒԻԿ. Սօֆիայից ստացուած տեղեկութիւններին համեմատ, այնտեղ իրերի դրութիւնը աւելի նուազ լարուած դրութեան մէջ է։ Բոլղարական կառավարութիւնը մտադիր է համաձայնութիւն կայացնել Ռուսիայի հետ։ Մինիստրութեան աւելի չափաւոր անդամները, մանաւանդ Նաչեվիչը և Ստոիլովը ընտրութիւնների խնդրում գիջանելով ծայրահեղ տարրերին, պնդում են, որ կառավարութիւնը Ռուսիայի վերաբերմամբ գիջողութիւնների ճանապարհը բռնի։

ԺՈՒՐԺԵՎՕ. Հաստատապէս հաւատացնում են, որ բոլղարական ազգային մեծ ժողովը կը բացուի Հոկտեմբերի 15-ին Տըրնօվոյում։ Կառավարութեան դրութիւնը խառնուած է. տժգոհութիւնը քանի գնում՝ ընդհանուր է դառնում, իսկ փող էլ ամենևին չկայ։ Բարօն Կաուլբարսի ճանապարհորդութեան արդիւնքները երեւում են. Ռուսիայի կողմնակիցները աւելի և աւելի համարձակութիւն են ստանում։ Ձայն է տարածուած, թէ Բոլղարիայի շատ տեղերում ամեն մի վալրկեան կառավարութեան դէմ խռովութիւններ կարող են ծագել։

ԲԵՐԼԻՆ. Գերմանական պետական բանկը դիսկօնտը 3-ից բարձրացրեց 3½%-ի։

7 Հոկտեմբերի

ԿՕՊԵՆՀԱԳԻՆ. Աչքի առաջ ունենալով լրագրական այն լուրը, որ իբր թէ Մօսկվայի գեներալ-գուբերնատօր իշխան Վօլգօրուկովի այստեղ գալը կապ ունի պրինց Վալդեմարին բոլղարական գահի կանդիդատ առաջարկութեան հետ, պաշտօնական «Bereing Tédende» յայտարարում է, որ իշխան Վօլգօրուկովը Ֆրանսիայից Ռուսիա վերադառնալիս նրա համար է միայն Կօպենհագէն հանդիպել, որ բոլոր Ռուսիայի կայսրուհու ողջոյնը մատուցանէ նրա թագակիր ծնողներին։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Շամախի. պ. գաւառապետին, Ձեր հեռագրի պատասխանը ուղարկուած է ձեզ. ստացած կը լինիք։

—

Մ ե ր վ. պ. Մ. Ա...ին։ Խնդրում ենք մեզ անգամ մի որև է նամակ ուղարկելիս հին ծրարով ու վրան ջրբոշկած հին մարկայով չուղարկէք մեզ, որպես զի մենք ստիպուած չլինինք ի զուր տեղը պօստից նամակը ընդունելու համար 14 կոպ. վճարելու։

Խմբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ես Գրիգոր Աւետեանցս, խնդրում եմ այն անձանց, որոնք ինձ մօտ բացուում գրուել են պ. Գրիգոր Գէորգեանցի «Անգութ օրիորդ» գրքին բաժանորդ, թող չեմ ստանան իրենց վճարած բաժանորդագինը, (գիրքը չի հրատարակուելու) դիմելով Շուշի այս հասցէով. Шушу, Григорію Георкянцу.

(ա) 3—3

(Щ. 2077) 50—47

ԿՕՖԷ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ ԵՒ ԸՆԿ.

(Щ. 4707) 51—33

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ

և վաճառւում են կենտրօնական գրավաճառանոցում Ս. Մանդինեանի ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒԻ *դասագիրքը առաջին և երկրորդ տարուայ համար և այդ դասագիրքը գործ ածելու համար առաջնորդութիւնը «ՌՈՒՍՍԱՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՏՒՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿ» վերնագրով։*

Առաջինը արժէ . . . . . 25 կոպ.
Երկրորդը . . . . . 60 կոպ.

10—8

Է. ՏԻԼՄԱՆՍ ԵՒ ԸՆԿ. ԲԱԳՈՒՈՒՄ

Առաջարկում են ինչպէս ներկայացուցիչներ Կովկասում

Ս. ԳՈՒԼԴՇԻՆՍԿՈՒ ԵՒ ՈՐԴՈՑ ԳԼՈՂ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԳՈՐՆԱՐԱՆԻ ՍՕՍՆՕՎԻՑՈՒՄ

ՊՈՂՊԱՏԻՑ և ԵՐԿԱԹԻՑ ՇԻՆԱՐ ԴԱԶԻ և ՋՐԱՆՑՔԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐ ՍԵՒ և ՑԻՆԿՈՎ պատած իրենց բոլոր պարագաներով և ամենաչափաւոր գներով։

6—2

Պատրաստել և ծախելը վճռել է Մոսկուայի բժշկական վարչութիւնը

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼՕՎԵԱՆ ՕՃԱՌ

ՊՐՕՖԻԶՕՐ Գ. Ֆ. ԻԻՐԳԵՆՍ

Բոլորովին ոչնչացնում է պեպենները, դեղին բծերը և չափազանց քրտինքը

Ա-աջաբնվում է ինչպէս տնուշահոտ և քաչէր յատկութիւն ունեցող օճառ

Մի կտորի գինն է 50 կ.

Ծախվում է բոլոր լաւ դեղօրէից մագազիններում և դեղատներում։ Բոլոր Ռուսիայի համար գլխաւոր պահեստը գտնվում է Մոսկուայում կ. ի. Ֆերբէյնի մօտ, Թիֆլիսում դեպօն գտնվում է Պօպօվի մօտ։

(Щ. 19197) 25—19

ՊԱՀԵՍՏ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ

ԳՈՐԾԱՏՈՒՆ



ՓՈՓՈԽԱԿԱՆ ՓՐԻՄԱՆ

Նոր պատենտի ակր հատարելագործուած

ԿԱՏԱՐԵԼ ԱՊԱՀՈՎԱՑՈՒՄՆ

Ծախվում է

ԺԱՄԱՆԱԿ ՏԱԼՈՎ

Միակ գործակալ՝ է. Ֆ. Աուերման. Թիֆլիս
Երևանեան հրապարակ. տ. Տէր-Աւետաճատրեանցի

100—98

Պետերբուրգի Հրատարակութեան ընկերութեան գործակալը պատիւ ունի յայտնելու, թէ սեպտեմբեր ամսուայ 12-ից նա պաշտօնապէս լիակատար իրաւունք է ստացել չծախուած 50ր. պայերի և ընկերութեան միւս բոլոր Հրատարակութիւնների համար ստորագրութիւն ընդունելու։ Պայերը առաջին տարում տալիս են 15%, որոնք ապահովեցրած են ընկերութեան բոլոր գոյքովը։ Պայեր գնելու համար թոյլատրվում է յետաձգել ժամանակամիջոցը։

Ընդունվում է «Семейный еженедѣльный илюстрированный журналъ»-ի պրեմիայով ստորագրութիւնը (10 պատկերներ ընտրութեամբ)։ Հումորիստիական ալբօմ, պատի օրացոյց ձրի յաւելուածով. պարիզեան մօդաներ և պատկերազարդ ընդհանուր էնցիկլօպեդիա։ Պայ ունեցողները ամսագիրը իւր բոլոր պրեմիաներով ստանում են ձրիապէս։

Հրատարակութիւն. գեղարուեստական ալբօմ (Ռուսիայի արեգակը և աստղերը։) Ժողովածու ռուսական և օտարերկրեայ նկարիչների պատկերների, դասագրքերի, գրքերի, յօդուածների և յայտարարութիւնների ընդունելութիւն։

Բոլոր պահանջներով խնդրում են դիմել հետևեալ նոր հասցէով. Մի քայէլեան կամուրջ, Շաֆրանովի գինուորական իրեղէնների մագազինի դէմ։ Այնտեղ յանձնուած է ծախելու «Գ. Բլօկկի» և «Ա. Զինգերի» բանկիրական ֆիրմաների կողմից 1-ին և 2-րդ փոխառութեան 5% տանող տոմսերը, յետաձգելով վճարի ժամանակամիջոցը և վերին աստիճանի ձեռնտու պայմաններով։

5—5

ԴԱՍԱԳԻՐՔ

ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ

Երկրորդ և բարեփոխեալ տպագրութեամբ

ԼՈՑՍ ԿՏԵՄՆԻ ՇԱՏ ՇՈՒՏՈՎ,

Մ. ՏԷՐ Սարգսեանց

Աչքաոնդրաթժշկ.

10—7

ՇԱՏ ՁԱՓԱՒՈՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԲ

ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՄ ՓՈՐՁԱՌՈՒԹ.

ՀԱՇՈՒԱՊԱՀՆԵՐ,

Որոնք կարող են ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ ՀԱՇՈՒԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ հիմնաւորապէս վարել առևտրական ամեն ճիւղերին վերաբերեալ հաշիւները, թէ ՀԱՅՈՑ և թէ ՌՈՒՍԱՑ լեզուներով։

Ընդունում եմ նոյնպէս

Ալացուցագրերի, հաշուեցոյցերի և հաշուեգրքերի երեսով ՀԱՇԻՒՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ պատուէրները։

Իմ հասցէն՝ «Նոր-Դարձ»

Խմբագրատան մէջ։

(բ) 20—14

Իսկական կարեմեքենաներ

„ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՉԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՑԱԾ

աշխարհի մէջ կարեմեքենաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարևոր ընկերներ տան տիկինների և աղնիւ օգնականներ բոլոր արհեստաւորների համար

ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում. Չինգերի ընկերութեան կենդրոնական պահեստում, Գօլօվինսկի պրօսպեկտի վերայ, Միրիմանովի տան և նրա բաժանմունքների մէջ։

Բագուում. Մի քայէլեան փողոցում, Միրզա Ասադեանի տ.
Ռոստովում. Բուլվարի դէմ, Չերեկովի տ.
Խարթովում. Պօլիցիական փողոցում, Թէրզի օղլու տ.
Թեհրանում. Մարշ-Մէյդանի դէմ, բուլվարի վեր։

և նրանց ճանապարհորդող գործակալների մօտ



ԱՐՏՕՆԱՔԻԱՆ ՍՏԱՑԱԾ

ՄԻԶԻՆ ԵՒ ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԵՒՐՕՊԱՑԻ ՀԱՄԱՐ ՉԻՆԴԵՐԻ ԵՒ ԸՆԿ. ԳԼԽԱՒՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԷՅԴԼԻՆԳԵՐ

ՉԻՆԳԵՐԻ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԵՏԵՒԵԱԼՆ ԵՆ

1) Մեքենաները ունին ընդարձակ գործարան և համաշխարհային հռչակ։ 2) Դները ամենաչափաւորներն են և միայն Չինգերի ընկերութեան մէջ։ 3) Ամեն տարի սիրվում է մօտ 700,000 հատ։ 4) Մեքենայի յատկութեանը չէ կարողացել նմանեցնել ոչ մի կարեմեքենայի գործարան։ 5) Թէ մեքենաները և թէ նրանց օգնական գործիքները միշտ լաւանում և կատարելագործվում են։ 6) Կարելի է ընտրել ամենամեծ քանակութեամբ և ամեն տեսակ ընտանեկան, արհեստաւորների համար մեքենաներ նաև մասնագիտական մեքենաներ գինուորական հագուստներ կարելու համար։ 7) Այս հռչակուած մեքենաները ամեն մարդ հեշտութեամբ կարող է ձեռք բերել։ Դնողները կարող են, եթէ կամենում են դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, այն է շաբաթով, կամ ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով դրամը վճարելու համար։ 8) Մեքենայի վերայ կատարելապէս և հիմնաւոր սովորելը ձրի է հմուտ վարպետուհիների համար։

Չ. Գ. Չինգերի և ընկ. բոլոր պահեստներում գտնվում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են. ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իւ ղէններ ամենաչափաւոր գներով։

60—36

Дозволено цензурою. Тифлисъ, 7-го Октября 1886 г. Տպարան Մ. Գ. Փոտինեանց և ընկ. Типографія М. Д. Ротиніанцъ и К-о Гол. пр., д. № 41